

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Անի Արթուրի Թամազյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ
ԽՄԲԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԽՈՍՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժ.02.07 – «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
համար ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի եվրոպական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.գ.դ., պրոֆեսոր Ֆլյույան Լուսինե Հրանտի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.գ.դ., պրոֆեսոր Թովմասյան Հրանուշ Ժորայի
Բ.գ.թ., դոցենտ Յաղոբյան Մարինե Հարությունի

Առաջատար կազմակերպություն՝ Վ. Բյուսովի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի փետրվարի 26-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ ԲԿԳԿ-ի Երևանի պետական համալսարանում գործող 009 Օտար լեզուներ մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2025 թվականի հունվարի 22-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
Բ.գ.դ., պրոֆեսոր՝



Գայանե Մուրադյան

Ժամանակակից լեզվաբանական հետազոտությունները լայնորեն ուսումնասիրում են, թե ինչպես է լեզուն օգտագործվում տարբեր նպատակներով, օրինակ՝ հաղորդակցության գործընթացի արդյունավետության բարձրացման, սոցիալական հարաբերությունների կարգավորման, տարբեր դերակատարների միջև փոխհարաբերությունների վրա ազդելու համար: Լեզվական միջոցների ընտրությունը կարող է առավել կարևոր նշանակություն ունենալ հատկապես, երբ գործ ունենք քաղաքական կամ դիվանագիտական բանակցությունների հետ:

Դիվանագիտական հաղորդակցության ընթացքում կիրառվող լեզվական միջոցները ոչ միայն նպաստում են կողմերի միջև փոխըմբռնման ձևավորմանը, այլև ազդում բանակցությունների ընթացքի և դրա արդյունքների վրա: Այս հանգամանքի կարևորումը և սույն ատենախոսության շրջանակներում լեզվական միջոցների լեզվագործաբանական հատկանիշների ուսումնասիրությունը թույլ է տալիս պարզորոշ հասկանալ, թե ինչպես են ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերում կիրառվող լեզվական միավորները նպաստել կամ խոչընդոտել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խնդրի արդյունավետ լուծմանը: Փաստաթղթերի լեզվագործաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել խոսույթային այնպիսի առանձնահատկություններ, որոնք հանգեցրել են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի դիվանագիտական կարգավորման գործընթացի անարդյունավետությանը:

Ատենախոսության ուսումնասիրության **ուղրտը** լեզվագործաբանական ուրույն հայեցակերպով արտահայտվող դիվանագիտական խոսույթն է, իսկ ուսումնասիրության **առարկան**՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից քննարկված կոնկրետ դիվանագիտական փաստաթղթերը:

Հետազոտության **լեզվական նյութը** ներառում է մոտ 50 առցանց հասանելի պաշտոնական փաստաթուղթ, որոնցից 42-ը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի, իսկ 8-ը՝ Կոսովոյի հակամարտությանը: Հետազոտվել են ոչ միայն ԵԱՀԿ Մինսկի խմբի, այլև այլ աղբյուրներից վերցված փաստաթղթեր՝ հնարավորություն տալով իրականացնել թեմային առնչվող փաստական նյութի համապարփակ վերլուծություն: ՀՀ արտաքին գործերի նախարարությունում առկա որոշ փաստաթղթեր, չնայած իրենց կարևորությանը, չեն դիտարկվել, քանի որ դրանք մեզ տրամադրելու խնդրանքը նախարարությունը մերժել է: Ինչպես փաստաթղթերը տրամադրելու հայցումը, այնպես էլ նախարարության պաշտոնական մերժումը ներկայացված են ատենախոսության Հավելվածներ բաժնում:

Այսպիսով, սույն ատենախոսության **նպատակն** է վերլուծել ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի խոսույթային և լեզվագործաբանական առանձնահատկությունները հասկանալու համար վերջիններիս ազդեցությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի վրա:

Սահմանված նպատակն իրագործելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

- Ապահովել ամուր տեսական հիմք դիվանագիտական խոսույթի վերլուծության համար՝ կարևորելով լեզվագործաբանական գործոնների դերը դիվանագիտական հաղորդակցության արդյունավետության բարձրացման և միջազգային բանակցություններում դրական արդյունքների ձեռքբերման գործում:
- Վերլուծել ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարություններում և զեկույցներում առկա պարտվողական խոսույթը բացահայտելու համար, թե ինչպես են խոսքի երկակիությունն ու բացասական գնահատումը նպաստել Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային գործընթացի անարդյունավետությանը:
- Ուսումնասիրել համապատասխան լեզվական ցուցիչները, ներառյալ երկակիություն, տոնայնություն և բացասականություն արտահայտող միավորները, և բացահայտել, թե ինչպես են վերջիններս խոչընդոտել հակամարտության արդյունավետ հանգուցալուծմանը:
- Իրականացնել Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտություններին առնչվող պաշտոնական փաստաթղթերում լեզվական ցուցիչների և լեզվագործաբանական հատկանիշների համեմատական վերլուծություն բացահայտելու համար, թե ինչպես է լեզուն որպես գործիք ազդել երկու հակամարտությունների լուծման արդյունքների վրա, և ինչ կերպ է այն ձևավորել կողմերի ընկալումները, գործողությունները և բանակցությունների ընթացքը:

Հետազոտության վարկածի դրույթներն են.

- ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերում ոչ պատշաճ լեզվագործաբանական ձևակերպումների և խոսքային միավորների կիրառումը եղել է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի դիվանագիտական կարգավորումը խոչընդոտող պատճառներից մեկը:
- ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերում նկատվում է պարտվողական խոսույթի գերակայություն, որը բնորոշվում է վճռականության պակաս արտահայտող խոսքային միավորներով, մինչդեռ Կոսովոյի նախադեպում (որը համանման պատմական նախապատմություն ունեցող հակամարտություն է) դիվանագիտական բանակցությունների վճռական խոսույթն էապես նպաստել է հակամարտության ավելի արդյունավետ լուծմանը:

Սույն հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է դիվանագիտական հաղորդակցության գործաբանական հայեցակերպի կարևորմամբ և դրա նկատմամբ գիտական հետաքրքրության աճով: Այս

համատեքստում ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությունն առաջնային նշանակություն ունի, քանի որ այն լուսաբանում է դիվանագիտական խոսույթի լեզվագործաբանական առանձնահատկությունները:

Սույն ատենախոսության **գիտական նորույթը** ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի խոսույթային և լեզվագործաբանական վերլուծությունն է, լեզվական միավորների խորը և համակարգված քննությունը, որը նախկինում չի կատարվել: Առաջին անգամ փորձ է արվում նկարագրել, վերլուծել և համեմատել ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերը խոսույթային և լեզվագործաբանական մոտեցումների տեսանկյունից:

Հետազոտության **տեսական նշանակությունը** պայմանավորված է այն հանգամանքով, որ սույն ատենախոսությունը դիվանագիտության մեջ լեզվի ռազմավարական կիրառության նոր մոտեցումներ է առաջադրում, պարզաբանում, թե ինչպես է կոնկրետ խոսույթն ազդում հակամարտությունների կարգավորման և միջազգային բանակցությունների ընթացքի վրա: Թեման արժեքավոր ներդրում է ինչպես լեզվաբանության, այնպես էլ միջազգային հարաբերությունների, հակամարտությունների վերլուծության, հաղորդակցության տեսության բնագավառների հետագա զարգացման համար:

Հետազոտության **կիրառական արժեքը** պայմանավորված է այն իրողությամբ, որ վերլուծված նյութերն ու եզրակացությունները կարող են կիրառվել լեզվագործաբանական ուղղվածության ավարտական և մագիստրոսական թեզեր, էսսեներ, գիտական հոդվածներ գրելիս, ինչպես նաև դիվանագիտական հաղորդակցության մեջ լեզվի կիրառման, տեքստի վերլուծության և մեկնաբանության գործնական դասընթացներում հատկապես հակամարտությունների կարգավորման ոլորտում լեզվագործաբանական ու խոսույթային վերլուծություններ կատարելիս:

Հետազոտության արդյունքները կարող են նաև կարևոր դեր խաղալ դիվանագիտության մեջ լեզվագործաբանական ռազմավարությունների մշակման գործում: Դրանք կարող են նաև նպաստել դիվանագետների համար լեզվաբանական (լեզվագործաբանական) վերապատրաստման ծրագրերի մշակմանը՝ նպատակ ունենալով ուսուցանել առավել արդյունավետ դիվանագիտական համատեքստային հաղորդակցության գործիքներ:

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ **մեթոդների** կիրառմամբ՝ նկարագրական, համեմատական, կոնտենտ վերլուծություն ինչպես նաև խոսույթային և սենտիմենտ վերլուծություններ: Բացի այդ, տվյալների բազմակողմանի վերլուծության համար կիրառվել են ինչպես քանակական, այնպես էլ որակական հետազոտական մեթոդներ:

Սույն ատենախոսության համար գիտական հիմք են հանդիսացել մի շարք հեղինակավոր լեզվաբանների արժեքավոր աշխատանքները, մասնավորապես՝ Զ. Սըրլի, Է. Սեթոուփ, Ս. Կ. Լևինսոնի, Ն. Ֆեյրբլավի, Թ. Ա. վան Դեյքի, Գ. Քուքի, Մ. Ֆուկոյի, Զ. Հոլմսի, Գ. Յուլի վերլուծությունները:

Հետազոտության նյութի փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են գիտական վեց հոդվածներում: Աշխատանքում կիրառվող մոտեցումները քննարկվել են Հայաստանի եվրոպական համալսարանի կիրառական լեզվաբանության ամբիոնի, ինչպես նաև Եվրասիա միջազգային համալսարանի լեզուների հաղորդակցության և մանկավարժության ամբիոնի նիստերում:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը պայմանավորված են վերջինիս նպատակով, առաջադրված խնդիրներով, հետազոտվող նյութի պահանջներով. հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածության մեջ հիմնավորվել են թեմայի ընտրությունը, արդիականությունն ու նորոյթը, որոշարկվել ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, տեսական և գործնական արժեքը, մեթոդաբանական հիմքերը:

Ատենախոսության **առաջին գլուխը**, («Դիվանագիտական խոսույթի վերլուծության տեսական մոտեցումները»), բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլուխն անդրադառնում է խոսույթի ընդհանուր բնութագրին, տարբերակում դիվանագիտական խոսույթը քաղաքական խոսույթից, ուսումնասիրում դիվանագիտական խոսույթի լեզվագործաբանական առանձնահատկությունները: Այստեղ ուսումնասիրվում և վերլուծվում են մի շարք լեզվաբանների տեսակետներ (Ա. Անիսիմովա, Ն. Արոյությունովա, Թ. Ա. վան Դեյք, Գ. Քուք, Մ. Ֆուկո, Լ. Պանքե, Գ. Ռ. Բերրիջ, Զ. Չարթերիս-Բլեք և այլք), որոնք տարբերակում են դիվանագիտական խոսույթը քաղաքականից՝ ներկայացնելով դիվանագիտական խոսույթի լեզվագործաբանական առանձնահատկությունները: Չնայած քաղաքական և դիվանագիտական խոսույթներն ունեն որոշակի նմանություններ, այդուհանդերձ, ծառայում են տարբեր նպատակների: Պետք է նշել, որ քաղաքական խոսույթին բնորոշ են համոզչությունը և փաստարկումը, մինչդեռ դիվանագիտական խոսույթին առավել բնորոշ է չեզոքությունը, կոնսենսուսի ձևավորումը, ինչպես նաև առավել պաշտոնական տոնայնությունը: Այս համատեքստում, որպես դիվանագիտական խոսույթի լեզվագործաբանական կարևոր առանձնահատկություն, անդրադարձ ենք կատարել գործաբանական ցուցիչներին, քանի որ վերջիններս հանդես են գալիս որպես կարևոր գործիքներ, որոնք հնարավոր են դարձնում քննել հակամարտությունների արդյունավետ կարգավորումն ապահովող գործոնները:

Երկրորդ ենթազվխում դասակարգվում են դիվանագիտական փաստաթղթերի տարբեր տեսակները և վերջիններիս լեզվաբանական առանձնահատկությունները: Այստեղ ընդգծվում է լեզվի կարևոր դերը դիվանագիտության մեջ: Ընդհանուր առմամբ, էլենյով լսարանից և նպատակից, դիվանագիտական փաստաթղթերը բաժանվում են ներքին (կառավարությունների ներսում) և արտաքին (պետությունների միջև) տեսակների: Պայմանագրերի, կոնվենցիաների, դիվանագիտական հայտարարությունների և զեկույցների օրինակների ուսումնասիրությունն ընդգծում է հստակ, պաշտոնական և չեզոք լեզվական միավորներ օգտագործելու կարևորությունը թյուրիմացություններից խուսափելու և արդյունավետ դիվանագիտական հարաբերություններ պահպանելու համար: Այս ենթազվխում նաև անդրադարձ է կատարվում ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի կառուցվածքին, ինչպես նաև անզլեբենի միջնորդ դերին՝ այդ կառուցվածքն ապահովելու գործում: ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի վերլուծության համատեքստում տարբերակվում են դիվանագիտական հայտարարություններ և զեկույցներ: Դիվանագիտական հայտարարությունները կարճ, հստակ և ազդեցիկ են, նպատակաուղղված ներկայացնելու որոշակի դիրքորոշում կոնկրետ իրադարձությունների կամ քաղաքականության վերաբերյալ: Զեկույցներն առավել մանրամասն են և չեզոք՝ նախատեսված քաղաքականություն մշակողների կամ մասնագետների համար, քանի որ ընդգծում են տեղեկատվության հստակությունն ու ամբողջականությունը:

Երրորդ ենթազվխում դիտարկվում են ԵԱՀԿ Մինսկի խմբի զեկույցների և հայտարարությունների վերլուծության համար անհրաժեշտ երեք լեզվագործաբանական գործիքներ. խոսքային ակտերը, ցուցայնությունը (deixis) և կանխենթադրույթը, մասնավորապես կանխենթադրույթային խթանիչները (presupposition triggers), որոնք կարևոր տեսական և գործնական նշանակություն ունեն դիվանագիտական խոսույթի վերլուծության համատեքստում: Այսպիսով, ստեղծվում է տեսական շրջանակ ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի հետագա վերլուծության համար:

Սույն հետազոտության շրջանակում իրականացված դիվանագիտական խոսույթը կազմող խոսքային ակտերի վերլուծությունը հիմնված է Ջ. Սըրլի լոկուտիվ, պերլոկուտիվ և իլլոկուտիվ (representatives or assertive, directives, commissives, expressives and declaratives) խոսքային ակտերի դասակարգման վրա¹: Ըստ Ս. Քորնելի՝ նշված խոսքային ակտերից դիվանագիտական խոսույթի ուսումնասիրության շրջանակում կարևոր դեր են կատարում հայտարարականները (declaratives), քանի որ վերջիններս կարող են փոխել իրականությունը, օրինակ՝ ինքնիշխանության ճանաչումը կամ հակամարտության հռչակումը, որոնք

¹ Searle, J. R. (1976). *Speech acts: An essay in the philosophy of language*, Cambridge: Cambridge University Press, 203 pp.

Նշանակալի ազդեցություն ունեն միջազգային հարաբերությունների ընթացքի վրա: Սույն հայտարարության *The United States has today formally recognized Kosovo as a sovereign and independent state* նպատակը պարզապես լրողներին տեղեկացնելը չէ, այլ պաշտոնապես արտահայտելն է մի դիրքորոշում, որը ճանաչման և հռչակման ակտ է իրականացնում հենց արտասանման պահին: Այլ ակտերը, ինչպիսիք են հաստատական արտահայտությունները (assertives), ուղղորդող արտահայտությունները (directives), պարտավորեցնող արտահայտությունները (commissives), հուզարտահայտչական միավորները (expressives) (թարգմանությունները մերն են՝ Ա. Թ.), նույնպես ցուցադրում են դիվանագիտական հաղորդակցության նրբությունները համոզելու, կոնսենսուս ձևավորելու կամ հուզական վիճակ արտահայտելու նպատակով:

Կանխենթադրույթը ևս ունի առանձնահատուկ կարևորություն, քանի որ վերջինս ծառայում է որպես անուղղակի հիմք, որի վրա կառուցվում է ասույթի ընդհանուր շրջանակը և ձևավորվում վերջինիս համատեքստը: Կանխենթադրույթը ձևավորվում է լեզվաբանական այնպիսի խթանիչների (triggers) միջոցով, ինչպիսիք են ճշգրիտ նկարագրությունները (definite descriptions), փաստական բայերը (factive verbs), ժամանակային ստորադաս նախադասությունները (temporal clauses) և կրկնվող արտահայտությունները (iterative expressions): Օրինակ՝ *peace process* արտահայտությունը հաստատում է, որ դիվանագիտական ջանքերը գտնվում են շարունակականության մեջ: Նման ենթադրությունները նպաստում են փոխըմբռնման ապահովմանը և կանխում թյուրըմբռնումները բանակցությունների ընթացքում:

Ցուցայնությունը (Deixis), որը դասակարգվում է անձնական, ժամանակային, տարածական, խոսույթային և սոցիալական տեսակների, կարևոր համատեքստային նշանակություն ունի դիվանագիտական խոսույթում: Անձնական ցուցայնությունը՝ *we* կամ *you* դերանունները, սահմանում է դերեր ու պարտականություններ, մինչդեռ ժամանակային ցուցայնությունը գործողությունը տեղակայում է ժամանակային շրջանակում (օր.՝ *March 5 Sochi summit*): Տարածական ցուցայնությունը անդրադառնում է աշխարհագրական համատեքստերին (օր.՝ *Vienna* կամ *occupied territories*), իսկ խոսույթային ցուցայնությունը պահպանում է հաջորդականությունը՝ փոխկապակցելով ասույթի տարբեր մասեր (օր.՝ *this report*): Սոցիալական ցուցայնությունը, շեշտադրելով մարդկային տարրերը, խթանում է համակրանքը և ընդգծում ընդհանուր պարտավորություններ, օրինակ՝ բնակչության վրա ազդեցություն գործելը:

Երկրորդ գլուխը, («ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարությունների և զեկույցների պարտվոդական խոսույթը՝ որպես Լեռնային Ղարաբաղի հակամարտության պարտության պատճառ»), կրկին բաժանված է երեք ենթագլխի: Առաջին ենթագլխում վեր է հանվում *պարտվոդական խոսույթ* հասկացությունը

հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերում, որը հաճախ արտահայտում է հուսալքություն և ցածր ակնկալիքներ: Ըստ այդմ, պարտվողականությունը, որը կապված է հոռետեսության և հուսալքության հետ, կարող է խաթարել կառուցողական ջանքերի իրականացումը:

Պարտվողական խոսույթը հաճախ հիմնվում է զգուշավոր լեզվական միջոցների վրա, ինչպիսիք են եղանակավորող բայերը (*may, can, should*) և ոչ վճռական խոսքային միավորները (*to urge, to express hope, perhaps, it is possible*), ինչպես նաև հաճախակի կիրառվող կրավորական կառույցներն ու երկակի հասկացությունները: Այս բառապաշարը խուսափում է հստակ պարտավորություն արտահայտելուց՝ փոխանցելով անորոշություն և պասիվություն, ինչը նկատելի է ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարություններում:

Երկրորդ ենթագլուխում անդրադարձ է կատարվում փաստաթղթերում երկակիության դերին, ինչպես նաև դրա ազդեցությանը հակամարտության կարգավորման վրա: Լեզվաբանական երկակիությունը հնարավորություն է տալիս դիվանագիտական խոսույթում պահպանել չեզոքություն, ապահովել ճկունություն և խուսափել ուղիղ բախումներից, սակայն դա նաև կարող է խոչընդոտել հակամարտության լուծման առաջընթացը²: Վերլուծության հիմք են հանդիսացել ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից տարբեր տարիներին, մասնավորապես 2009, 2016, 2017, 2021 հրապարակված 16 փաստաթղթեր, որոնցում հայտնաբերվել են շարահյուսական, իմաստային, գործաբանական երկակիություն արտահայտող միավորներ:

Շարահյուսական երկակիությունը հիմնված է բազմազան մեկնաբանությունների տեղիք տվող նախադասությունների վրա: Օրինակ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի 2009 թ. հայտարարության մեջ կիրառվող *The Ministers reaffirmed their commitment to work intensively to resolve the remaining issues and to reach an agreement based, in particular, upon the principles of the Helsinki Final Act of Non-Use of Force or Threat of Force, Territorial Integrity and the Equal Rights and Self-Determination of Peoples*³ նախադասության մեջ պարզ չէ, թե ինչպես են սկզբունքները կապված համաձայնագրի հետ, և ինչպես են դրանք իրացվելու՝ անկախ թե՞ փոխկապակցված տարբերակով:

Իմաստաբանական երկակիություն է առաջանում, երբ ասույթն ունի երկու տարբեր նշանակություն, օրինակ՝ 2017թ. ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարությունը՝

² D'Acquisto, G. (2017). A Linguistic Analysis of Diplomatic Discourse: UN Resolutions on the Question of Palestine, Cambridge: Cambridge Scholars Publishing, 140 pp.

³ Joint Statement by the Heads of Delegation of the Minsk Group Co-Chair Countries and the Foreign Ministers of Azerbaijan and Armenia (2009, December 1) Athens

URL:<https://www.osce.org/files/f/documents/a/2/40626.pdf>

We are also aware of allegations of atrocities committed on the field of battle in April, which we condemn in the strongest terms, allegations of atrocities⁴ կարող է մեկնաբանվել թե՛ որպես վստահելի հաղորդումներ, թե՛ որպես չհաստատված պնդումներ, քանի որ *allegations* բառը ինքնին չեզոք է, բազմիմաստ և չի հստակեցնում պնդումների արժանահավաստությունը: Այստեղ երկակիությունը պայմանավորված է ոչ միայն բառի տարբեր իմաստներով, այլ նաև համատեքստով:

Գործաբանական երկակիությունն ամենահաճախ հանդիպող տեսակն է՝ կազմելով վերլուծված օրինակների 40%-ը: Այն ներառում է համատեքստային մեկնաբանություններ, ներառյալ խոսքային ակտերը, կանխենթադրույթները և հղումային իմաստները: Օրինակ՝ 2016 թ. ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարության *call upon the sides to take all necessary measures⁵* արտահայտությունը կարող է դիտարկվել որպես խաղաղության պահպանման կոչ կամ որպես թաքնված աջակցություն ագրեսիվ գործողություններին: Հարկ է նշել, որ չնայած երկակիությունը նպաստում է դիվանագիտական ճկունությանը, վերջինիս չարաշահումը կարող է խաթարել վստահությունն ու առաջընթացը:

Երրորդ ենթագլուխում վերլուծվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերում առկա տոնայնությունը, ինչպես նաև բացասական գնահատումը: Տոնայնության ուսումնասիրությունը պարտվողական խոսույթի համատեքստում կարևոր է, քանի որ վերջինս ձևավորում է հաղորդակցության ճիշտ ընկալումը, ազդում բանակցությունների ընթացքի և հակամարտությունների կարգավորման հեռանկարների վրա: Ըստ Օ. Կալինինի դասակարգման՝ տոնայնությունը կարող է լինել խիստ բացասական, բավական բացասական, չեզոք, բավական դրական և լիովին դրական⁶: Սա առանձնահատուկ նշանակություն ունի դիվանագիտական խոսույթում, որտեղ տոնայնությունն ազդում է ընկալումների, բանակցությունների և հակամարտությունների կարգավորման հնարավորության վրա: Մասնավորապես ստորև ներկայացված գծապատկերի համաձայն՝ ակնհայտ է, որ վերլուծված ինը հայտարարություններից և գեկույցներից 45%-ը ցուցաբերում է չեզոք տոնայնություն, մինչդեռ 33%-ը հակված է դեպի բավական բացասական տրամադրության՝ 11%-ը խիստ բացասական է, 11%-ը՝ բավական դրական: Հավելենք, որ վերլուծված տվյալների մեջ լիովին դրական տրամադրությունների դեպքեր չեն նկատվել:


⁴ Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group (29 March 2017) Yerevan URL: <https://www.osce.org/minsk-group/308521>

⁵ Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group (2016, October 26) Moscow/Washington D.C./Paris. OSCE. URL: <https://www.osce.org/mg/277091>

⁶ Калинин, О. И. (2016). Опыт проведения контент-анализа политических медиатекстов (на примере китайского языка). *Политическая лингвистика*, 2(56), Москва: Наука, сс.1-9.

Գծապատկեր. Տոնայնության վերլուծությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարություններում և զեկույցներում⁷

ՏՈՆԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ և ՉԵԿՈՒՅՑՆԵՐՈՒՄ



Ինչ վերաբերվում է բացասական գնահատմանը, ապա ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարություններում և զեկույցներում կարող ենք տեսնել այնպիսի բառեր և արտահայտություններ, ինչպիսիք են *disastrous, precarious, ruins, little economic activity, poor, limited, lack, harsh, unacceptable, prejudice, worship* (OSCE Minsk Group, 2010)⁸ որոնք ունեն նվաստացուցիչ բնույթ և արտահայտում են բացասական վերաբերմունք ՀՀ և Արցախի նկատմամբ:

Սույն ատենախոսության **երրորդ գլուխը** («Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտությունների փաստաթղթերի համեմատական լեզվագործաբանական վերլուծություն») ներառում է երեք ենթագլուխ: Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտությունների համեմատությունն անհրաժեշտ է, քանի որ երկու հակամարտություններն էլ հիմնված են ազգերի ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների վրա: Այս համեմատությունը հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչպես են երկու հակամարտություններին վերաբերող դիվանագիտական փաստաթղթերում կիրառվող միջոցները՝ խոսքային ակտերը, կանխենթադրույթները, ցուցայնությունը և գործնաբանական ցուցիչները ձևավորել քաղաքական պատումներ (narratives) ու ազդել հակամարտությունների ելքի վրա:

⁷ Այս գծապատկերը և բերված բոլոր աղյուսակները Ա. Թամազյանի

⁸ Executive Summary of the “Report of the OSCE Minsk Group Co-Chairs’ Field Assessment Mission to the Occupied Territories of Azerbaijan Surrounding Nagorno-Karabakh” (2010). OSCE. URL: <https://www.osce.org/files/f/documents/7/d/76209.pdf>

Առաջին ենթազխում փաստաթղթերի համեմատական վերլուծությունը հակադրում է խոսքային ակտերը, ցույց տալով, որ հասկապես հայտարարականներն առավել հստակորեն են կիրառվել Կոսովոյին առնչվող փաստաթղթերում, ինչը նպաստել է խնդրի բարենպաստ լուծմանը, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի փաստաթղթերի ավելի թույլ ազդեցությունը սահմանափակել է խաղաղության հասնելու գործընթացը: Այլ կերպ, Կոսովոյին վերաբերող բանաձևերում գերակշռում են հաստատական արտահայտությունները և ուղղորդող արտահայտչամիջոցները որպես խոսքային ակտեր՝ հիմնված պարտադիր հայտարարական ձևակերպումների վրա, ինչը խթանում է դրանց արդյունավետությունը: Լեռնային Ղարաբաղի փաստաթղթերը, ընդհակարակը, կենտրոնանում են տարածքային ամբողջականության վրա՝ հիմնվելով առաջարկությունների, այլ ոչ թե պարտադրանքների վրա: Կոսովոյի փաստաթղթերում հայտարարականները գերակշռում են՝ կազմելով խոսքային ակտերի 23.53%-ը: Օրինակ՝ *Endorses and supports the agreements signed in Belgrade (RES:1203(1998))*⁹ հայտարարականը վերաբերում է միջազգային լեզիտիմություն ստացած պայմանագրին. այն ամրապնդում է Կոսովոյի անկախության ճանաչումը: Լեռնային Ղարաբաղին վերաբերող փաստաթղթերում մեծամասնություն են կազմում պերլոկուտիվ ակտերը՝ 33.33%, որոնց նպատակն է ընկալումների վրա ազդեցություն գործելը, այլ ոչ թե պարտադրանքը: Օրինակ՝ *Urges parties to resume negotiations (RES:822,1993)*¹⁰ պերլոկուտիվ ակտը կրկին ուղղորդում է կողմերին վերադառնալ խաղաղ բանակցություններին՝ առանց կոշտ պարտադրանքի՝ լոկ շեշտադրելով դիվանագիտական գործընթացի կարևորությունը: Ավելին, Կոսովոյին վերաբերող փաստաթղթերում բայերը, ինչպիսիք են *to demand, to support* և *to recognize*, արտահայտում են հրատապություն և հստակ գործողություններ, մինչդեռ Լեռնային Ղարաբաղին վերաբերող փաստաթղթերում կիրառվում են մեղմ ձևակերպում արտահայտող այնպիսի բայեր, ինչպիսիք են *to reaffirm* և *to express*:

Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի փաստաթղթերի խոսքային ակտերի վերլուծության ամփոփ պատկերը ներկայացված է Աղյուսակ 1-ի և Աղյուսակ 2-ի տեսքով:

⁹ United Nations Security Council Resolution 1203, (1998)

¹⁰ United Nations Security Council Resolutions (822, 853, 874, 884) on Nagorno-Karabakh, (1993)
URL: <https://2001-2009.state.gov/p/eur/rls/or/13508.htm#>

**Աղյուսակ 1. Խոսքային ակտերի համեմատական վերլուծությունը
Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտությունների փաստաթղթերում**

Խոսքային ակտի տեսակ	Կոսովո (%)	Լեռնային Ղարաբաղ (%)
Լոկուտիվ ակտերը	11.76%	13.33%
Իլլոկուտիվ ակտեր - Հաստատական արտահայտությունները	14.71%	10%
Իլլոկուտիվ ակտեր Ուղղորդող արտահայտությունները	14.71%	13.33%
Իլլոկուտիվ ակտեր - Պարտավորեցնող արտահայտություններ	5.88%	6.67%
Իլլոկուտիվ ակտեր - Հուզարտահայտչամիջոցներ	11.76%	10%
Իլլոկուտիվ ակտեր - Հայտարարականներ	23.53%	13.33%
Պերլոկուտիվ ակտեր	17.65%	33.33%

Աղյուսակ 2. Խոսքային ակտերի վերլուծության ամփոփ պատկեր

Բաղադրիչ մաս	Կոսովոյի փաստաթղթեր	Լեռնային Ղարաբաղի փաստաթղթեր
Խոսքային ակտի տեսակ	Գերակշռում են (23.53%) հայտարարականները, որոնք արտացոլում և շեշտադրում են վճռականություն	Գերակշռում են պերլոկուտիվ ակտերը (33.33%)՝ կենտրոնանալով ազդեցություն գործելու վրա, այլ ոչ թե հարկադրելու
Լեզվի տոնայնություն	ուժեղ, ուղղակի և վճռական՝ հիմնված միջազգային աջակցության վրա	Զեզոք և շարունակական բանակցությունների խթանում՝ նպատակաուղղված փոխզիջման հասնելուն

Փաստենք, որ Կոսովոյի փաստաթղթերում խոսքային ակտերի ռազմավարական օգտագործումը նպաստել է ավելի ուժեղ միջազգային աջակցությանն ու վճռական գործողություններին, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի

համատեքստում առավել թույլ լեզվական ձևակերպումները սահմանափակել են խնդրի դրական լուծման հնարավորությունները:

Երկրորդ ենթազխում հետազոտության են ենթարկվում երկու հակամարտություններին վերաբերող փաստաթղթերում ցուցայնունության տեսակների և կանխենթադրույթի կիրառումը՝ ցուցայնունության համատեքստում կարևորելով, թե ինչպես են անձնական, ժամանակային, տարածական, խոսույթային և սոցիալական ցուցայնությունները դիվանագիտական խոսույթում ձևավորում հեղինակություն, ժամանակ, տեղանք և սոցիալական դերեր: Օրինակ՝ ժամանակային ցուցայնության առումով Կոսովոյի վերաբերյալ նշվում է *In exercising their functions, all persons undertaking public duties or holding public office in Kosovo shall observe internationally recognized human rights standards (UNMIK Regulation No. 1999/1, Section 2)*¹¹ նախադասությունը, որտեղ *shall* օժանդակ բայի օգտագործումը ցույց է տալիս ապագայի պարտավորություն, որը ենթադրում է շարունակականություն կառավարությունում: Ի հակադրություն, Լեոնային Ղարաբաղի դեպքում, համանախագահների *Assessing the current state of affairs in the region, the Co-Chairs reaffirmed their belief that a great deal of progress has been achieved in the past year and a half* (OSCE Minsk Group, 2006)¹² հայտարարության մեջ կիրառվում է անցյալ անորոշ ժամանակաձև, ինչն էլ մատնանշում է նախորդ գործողությունների վրա կենտրոնացում, այլ ոչ թե ընթացիկ պարտավորությունների կամ ապագայակենտրոն մոտեցումների կարևորում: Համանման պատկեր է նկատվում նաև անձնական, տարածական, խոսույթային և սոցիալական ցուցայնությունների դեպքում:

Կոսովոյի և Լեոնային Ղարաբաղի փաստաթղթերի մեջ ձևավորված կանխենթադրույթները կրկին ցույց են տալիս տարբեր մոտեցումներ: Կոսովոյի փաստաթղթերը շեշտում են օրինականությունն ու կայունությունը՝ հիմնված միջազգային նորմերի վրա: Օրինակ՝ *training OSCE-KVM personnel for human rights tasks* և *local human rights capacity building* (OSCE-KVM, 1999)¹³ արտահայտությունները ենթադրում են մարդու իրավունքների պահպանման պարտավորություն՝ հաստատելով Կոսովոյի օրինական կառավարման համակարգի առկայությունը: Ի տարբերություն Կոսովոյի՝ Լեոնային Ղարաբաղի

¹¹ United Nations Interim Administration Mission in Kosovo (UNMIK). (1999). UNMIK Regulation No. 1999/1 on the Authority of the Interim Administration in Kosovo.

URL: https://unmik.unmissions.org/sites/default/files/regulations/02english/E1999regs/RE1999_01.htm

¹² OSCE Minsk Group Co-Chairs urge Armenia and Azerbaijan to prepare their respective publics “for peace, not for war” (9 March 2006) Washington, D.C. URL: <https://www.osce.org/mg/47148>

¹³ Organization for Security and Co-operation in Europe (OSCE). (1999). Kosovo/Kosova: As seen, as told: An analysis of the human rights findings of the OSCE Kosovo Verification Mission (October 1998 to June 1999). OSCE. URL: <https://www.osce.org/files/f/documents/d/d/17772.pdf>

փաստաթղթերում շեշտվում է բանակցությունների ու տեղական առաջնորդների պատասխանատվության կարևորությունը: Օրինակ՝ *We encourage the Parties to avoid the unnecessary politicization of these important humanitarian steps* (OSCE Minsk Group, 2017)¹⁴ ձևակերպումը ենթադրում է համագործակցության կարիք, իսկ *Further delays will only complicate the situation and could call into question the commitment of the Parties to reach a lasting agreement* (OSCE Minsk Group, 2017)¹⁵ օրինակը պատասխանատվությունը դնում է Հայաստանի և Ադրբեջանի նախագահների վրա՝ նվազեցնելով միջազգային միջնորդների դերը:

Կանխենթադրույթային խթանիչները, ինչպես օրինակ՝ *The OSCE/ODIHR temporarily posted an adviser to the OSCE-KVM Support Unit in Vienna* (OSCE-KVM, 1999)¹⁶ ասույթում, ընդգծում են միջազգային կառույցների դերը և ներգրավվածությունը Կոսովոյում՝ փաստելով նրանց անմիջական ազդեցությունը տարածաշրջանում խաղաղության հաստատման գործընթացում: Փաստական բայերը, օրինակ՝ *to note-p. (to note that the provisions of the Law shall be without prejudice* (UNMIK Regulation No. 2007/10)¹⁷, հաստատում են Կոսովոյի իրավական օրինականությունը, իսկ *reaffirmed* բայը *The Presidents reaffirmed their commitment to the peace process* (OSCE Minsk Group, 2017)¹⁸ ձևակերպման մեջ ենթադրում է Լեռնային Ղարաբաղի արդեն գոյություն ունեցող պարտավորությունը:

Այսպիսով, Կոսովոյի փաստաթղթերում կանխենթադրույթները ձևավորում են միջազգային նորմերին համապատասխան կառավարման օրինականության և կայունության հասկացություն, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի փաստաթղթերում դրանք ընդգծում են տեղական կողմերի պատասխանատվությունը և միջազգային միջամտության նվազեցման անհրաժեշտությունը:

Երրորդ ենթագլուխը անդրադառնում է Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտություններին վերաբերող դիվանագիտական տեքստերում գործաբանական ցուցիչների գործառնական դերերի համեմատական վերլուծությանը: Այն ընդգծում է, թե ինչպես է լեզվի ռազմավարական կիրառումն ազդում դիվանագիտական ջանքերի արդյունավետության վրա՝ Կոսովոն

¹⁴ Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries (2017, December 7) Vienna. OSCE. URL: <https://www.osce.org/minsk-group/361286>

¹⁵ Տե՛ս վերոնշյալ հղումը

¹⁶ Organization for Security and Co-operation in Europe (OSCE). (1999). Kosovo/Kosova: As seen, as told: An analysis of the human rights findings of the OSCE Kosovo Verification Mission (October 1998 to June 1999). OSCE. URL: <https://www.osce.org/files/f/documents/d/d/17772.pdf>

¹⁷ United Nations Interim Administration Mission in Kosovo (UNMIK). (2007). UNMIK Regulation No. 2007/10 on the Promulgation of the Law on the Protection of Personal Data URL: https://unmik.unmissions.org/sites/default/files/regulations/02english/E2007regs/RE2007_10.pdf

¹⁸ Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group (29 March 2017) Yerevan URL: <https://www.osce.org/minsk-group/308521>

հաջողությամբ հասել է անկախության, մինչդեռ Լեռնային Ղարաբաղում դիվանագիտական ջանքերն արդյունավետ չեն եղել:

Վերլուծելով Կոսովոյի վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1244 բանաձևը (1999 թ.), նշենք, որ առկա են ուժեղ գնահատողական բայեր, ինչպիսիք են *regretting, condemning, determines, demands, is authorizes*.¹⁹: Այս բայերը գործում են որպես կիսագործաբանական ցուցիչներ՝ ձևավորելով բանաձևի տոնը և հեղինակությունը՝ ստեղծելով լուրջ և հրատապ խոսույթ: Վերլուծությունը նաև ընդգծում է կառուցվածքային նշանների, ցուցայնական հղումների, քանակականիչների և ժամանակային ցուցիչների դերը՝ տեքստի համակցվածությունն ու ՄԱԿ-ի բանաձևերի հեղինակությունն ամրապնդելու գործում: Ի հակադրություն վերջինիս, Լեռնային Ղարաբաղին վերաբերող ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ այս հայտարարություններում օգտագործվող լեզուն հակված է շեշտելու հակամարտության շարունակականությունը: Օրինակ՝ *do not prejudge* արտահայտությունը սույն հայտարարության մեջ *The procedures of July 19 do not prejudice the final legal status of Nagorno-Karabakh*²⁰, երկիմաստության և խուսափողական լեզվի օրինակ է, ինչը համահունչ է Ադրբեջանի տարածքային ամբողջականության շահերին:

Ընդհանուր առմամբ, կարող ենք արձանագրել, որ Կոսովոյի դիվանագիտական տեքստերում գործաբանական ցուցիչների արդյունավետ կիրառումը նպաստել է նրա ճանաչմանն ու անկախությանը, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի դեպքում այս ցուցիչների պակասը խոչընդոտել է հակամարտության կարգավորման առաջընթացը:

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ **եզրակացությունները**.

- Դիվանագիտական խոսույթի բազմամակարդակ լեզվագործաբանական վերլուծությունը, ներառյալ խոսքային ակտերը, ցուցայնությունը, կանխենթադրույթը և գործաբանական ցուցիչները, ցույց են տալիս, թե ինչպես է լեզուն ձևավորում բանակցությունների դինամիկան, ինչպես նաև ազդում դիվանագիտական ճանապարհով հակամարտությունների կարգավորման արդյունքների վրա:
- ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարություններում պարտվողական խոսույթը բնութագրվում է զգուշավոր լեզվով, կրավորական կառույցներով և սահմանափակումների, այլ ոչ թե լուծումների վրա կենտրոնացմամբ:

¹⁹ United Nations Security Council. (1999). Security Council Resolution 1244 (1999) on the situation relating to Kosovo. URL: <https://peacemaker.un.org/kosovo-resolution1244>

²⁰ Statement of the OSCE Minsk Group Co-Chairs (13 July 2012) Yerevan, URL: <https://www.osce.org/mg/92189>

- Մինսկի խմբի տարբեր տարիների 16 հայտարարություններում հայտնաբերվել են շարահյուսական, իմաստաբանական և գործաբանական երկակիության կիրառություններ, որոնք հանգեցրել են տարատեսակ մեկնաբանությունների՝ կասկածի տակ դնելով հայկական կողմի շահերն ու ինքնորոշման նպատակները: Գործաբանական երկակիությունը բնորոշ է փաստաթղթերի մեծ մասին (38.89%), որին հաջորդում է իմաստաբանական (33.33%), ապա՝ շարահյուսական երկակիությունը (27.78%):
- Բացասական գնահատումը փաստաթղթերում արտահայտվում է նվաստացնող բառապաշարով, ինչը ձևավորել է համապատասխան հասարակական կարծիք և առաջնայնություն տվել Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքին:
- Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտությունների 15 փաստաթղթերի լեզվագործաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ Կոսովոյի փաստաթղթերում գերակշռում են հայտարարական խոսքային ակտերը (23.53%), որոնք նպաստում են միջազգային լեզվատիրության հաստատմանը, իսկ Լեռնային Ղարաբաղի փաստաթղթերում գերիշխում են պերլոկուտիվ ակտերը (33.33%), որոնք չեն ենթադրում միջազգային աջակցություն և իրացնում են տեսակետներ ձևավորելու, այլ ոչ թե լուծումներ գտնելու գործառույթ:
- Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտությունների վերաբերյալ 50 փաստաթղթերում բայի կիրառման վերլուծությունը ցույց է տալիս, որ Կոսովոյի դեպքում օգտագործվում են ուժեղ, հաստատական, նախաձեռնողականություն արտահայտող բայեր, որոնք ենթադրում են խնդրի լուծման կոնկրետ քայլեր, իսկ Լեռնային Ղարաբաղին առնչվող փաստաթղթերում կիրառվում են ավելի չեզոք բայեր, որոնք միտված են հակամարտության շարունակականությանը և հանդես են գալիս պարտվողական երանգավորմամբ:
- Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտության 15 փաստաթղթերում բացահայտվել են անձնական, ժամանակային, տարածական, խոսույթային և սոցիալական ցուցայնության 36 օրինակներ: Ցուցայնության նպատակային կիրառումը Կոսովոյի փաստաթղթերում նպաստում է վերջինիս միջազգային ճանաչմանը՝ արդյունավետ կերպով կողավորելով սոցիալական դերերը, ժամանակային պարտավորությունները և տարածական լեզվատիրությունը: Ի հակադրություն, Լեռնային Ղարաբաղին առնչվող փաստաթղթերում ցուցայնությունն ավելի անարդյունավետ կիրառություն ունի, ինչն էլ հանգեցնում է ավելի երկակի և անորոշ պատումային շարադրանքների:

- Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտություններին վերաբերող 15 փաստաթղթում վերլուծվել են 49 կանխենթադրույթային խթանիչներ: Լեռնային Ղարաբաղի դեպքում ճշգրիտ նկարագրությունները կազմում են 32.7%, իսկ Կոսովոյի դեպքում՝ 67.3%, ինչը ցույց է տալիս Կոսովոյի հակամարտության լեզվի մեջ կառավարման կարևորումը: Ավելին՝ հայեցակերպային բայերի կիրառությունը ընդգծում է նմանատիպ կառավարման շարունակականությունը: Մինչդեռ, Լեռնային Ղարաբաղի փաստաթղթերում կանխենթադրույթները, շեշտելով բանակցությունները և տեղական դերակատարներին պատասխանատվություն վերագրելով, նվազեցնում են ԵԱՀԿ-ի դերը:
- Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտությունների վերաբերյալ 584 գործաբանական ցուցիչների վերլուծությունը ցույց է տալիս, որ ամենաշատ կիրառվող լեզվական միավորները շաղկապներն են՝ 39.7 %, գնահատում արտահայտող բայերն ու ուղղորդող խոսքային ակտերը կազմում են 17.82%: Բառային արտահայտությունները քանակական դերանուններն ու ժամանակային ցուցիչները կազմում են համապատասխանաբար 7.92 %, 11.88 % և 4.95 %:
- Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Կոսովոյի դեպքում վճռական և ուժեղ լեզուն կարող է ձևավորել միջազգային այնպիսի մթնոլորտ, որը նպաստում է քաղաքական նպատակների իրականացմանը: Լեռնային Ղարաբաղի դեպքում, ընդհակարակը, չեզոք լեզվական մոտեցումը հանգեցնում է խնդրի լուծման անարդյունավետությանը: Այլ կերպ, հակամարտության ելքը որոշելու կարևոր գործոններից մեկը դիվանագիտական փաստաթղթերում լեզվի՝ որպես ռազմավարական գործիքի օգտագործումն է հատկապես ուժեղ գործաբանական ցուցիչների, ցուցայնության և խոսքային ակտերի կիրառմամբ: Կոսովոյի փաստաթղթերը ցույց են տալիս, թե ինչպես լեզուն կարող է արդյունավետորեն նպաստել քաղաքական և դիվանագիտական նպատակների իրագործմանը:
- Փաստական նյութի վերլուծությունը լայն առումով վկայում է, որ լեզուն որպես ռազմավարական գործիք կիրառելու դեպքում դիվանագիտական փաստաթղթերը կարող են դառնալ հակամարտությունների կարգավորման հզոր խթան:

Հետևաբար, մեր հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման մեջ ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության անարդյունավետության պատճառներից մեկը լեզվագործաբանական համոզիչ և վճռական գործիքների բացակայությունն է: Երկակի և պարտվողական խոսույթը, ինչպես նաև լեզվագործաբանական միավորների սխալ կիրառումը նվազեցնում է դիվանագիտական լուծումներ

գտնելու հնարավորությունը, մինչդեռ հստակ, նպատակային և աջակցող լեզվագործաբանական և խոսույթային ռազմավարությունների կիրառումը հաջող դիվանագիտական լուծումներ գտնելու գրավական է: Հավելենք, որ Կոսովոյի դեպքում լեզվական միավորների ճիշտ ընտրությունը ապահովում է ազգերի ինքնորոշման սկզբունքի առաջնահերթությունը, մինչդեռ Լեռնային Ղարաբաղի դեպքում միևնույն սկզբունքը ստորադասվում է տարածքային ամբողջականության սկզբունքին:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Tamazyan, A. (2021). The expression of negative evaluation in the political discourse (based on the documents of OSCE Minsk group). *European University Journal*, 12 (01), pp. 427-436.
2. Tamazyan, A. (2023). Defeatist discourse and its role in the defeat of Nagorno-Karabagh (on the example of the statements of the OSCE Minsk Group). *Scientific Artsakh*, 4 (19), pp. 100-114. <https://doi.org/10.52063/25792652-2023.4.19-100>
3. Tamazyan, A. (2023). Speech actions or declaratives of the OSCE Minsk Group statements: Why didn't they help to resolve the conflict of Nagorno-Karabagh? *Bulletin of Eurasia International University 2023* (2). pp. 156-166. DOI: 10.53614/18294952-2023.2-156
4. Tamazyan, A. (2024). Comparative analysis of the functional roles of pragmatic markers in the documentation of the Kosovo and Nagorno-Karabakh conflicts. *Bulletin of Brusov State University*, 1 (68). pp. 137-157. DOI: 10.51307/18293107/laph/24.68-137
5. Tamazyan, A. (2024). Tonality analysis of the OSCE Minsk Group statements and reports on the Nagorno-Karabakh conflict. *Scientific Artsakh*, 1 (20), pp.120-129.
6. Tamazyan, A. (2024). Ambiguity in the OSCE Minsk Group documents (on the example of Nagorno-Karabagh conflict). *Bulletin of Eurasia International University*, 2024(1), pp. 154-169. <https://doi.org/10.53614/18294952-2024.1-154>

ANI TAMAZYAN
PRAGMALINGUISTIC AND DISCOURSE FEATURES OF THE OSCE
MINSK GROUP DOCUMENTS ON THE NAGORNO-KARABAKH CONFLICT
Summary

The main aim of this dissertation is to analyze the pragmalinguistic and discourse features of the OSCE Minsk Group documents in order to understand their impact on the conflict resolution process.

In order to accomplish this aim, the following objectives have been addressed:

- to provide a firm theoretical framework for analyzing diplomatic discourse, concentrating on its pragmalinguistic features and the interplay between language, power and international relations to understand how these elements influence the effectiveness of diplomatic communication and the outcomes of international negotiations,
- to analyze the defeatist discourse in the OSCE Minsk Group's statements and reports and try to identify how pessimism, ambiguity and negative evaluations contributed to the ineffectiveness of diplomatic efforts in the Nagorno-Karabakh conflict,
- to examine specific linguistic markers, including ambiguity, tonality and negative evaluation, identify how these elements affect the potential for effective conflict resolution,
- to conduct a detailed comparison of the linguistic elements and pragmalinguistic features in the official documents related to the Kosovo and Nagorno-Karabakh conflicts to uncover how the differences in language use contributed to the divergent outcomes in these conflicts.

The topicality of this research stems from the growing scientific interest in the pragmalinguistic use of language within the framework of diplomatic communication, stressing the significance of language use and the manifestations arising from it. In this context, the pragmalinguistic study of OSCE Minsk Group documents related to the Nagorno-Karabakh conflict is of primary importance, as it illuminates the pragmalinguistic and discourse features of these texts.

The scientific novelty of this research lies in its application of pragmalinguistic and discourse analysis to the OSCE Minsk Group's documentation, which has not been extensively studied in the framework of linguistics before. For the first time, an attempt is made to describe, analyze and compare the OSCE Minsk Group documents from the perspective of discourse and pragmalinguistic approaches. The choice of the research object, namely the documents of the Minsk Group of OSCE, have not yet been subjected to a deep and systematic linguistic examination.

The theoretical significance of this dissertation is the innovative application of discourse and the pragmalinguistic analysis of the Minsk Group's documents regarding the Nagorno-Karabakh conflict. In other words, it provides new theoretical perspectives on the strategic application of language in diplomacy, thereby improving comprehension of the impact of pragmatics and discourse on international negotiations and conflict resolution.

The practical significance of this dissertation lies in its potential to propose valuable perceptions for term papers, theses and scholarly articles, particularly those centered on diplomatic discourse, conflict resolution and text and discourse analysis. The findings can lead to the creation of linguistic training programs intended for diplomats, and offer recommendations for more effective and contextually appropriate methods of communication in diplomacy.

АНИ АРТУРОВНА ТАМАЗЯН
ПРАГМАЛИНГВИСТИЧЕСКИЕ И ДИСКУРСИВНЫЕ ОСОБЕННОСТИ
ДОКУМЕНТОВ МИНСКОЙ ГРУППЫ ОБСЕ ПО НАГОРНО-КАРАБАХСКОМУ
КОНФЛИКТУ

Резюме

Основная цель данной диссертации-проанализировать прагмалингвистические и дискурсивные особенности документов Минской группы ОБСЕ с целью понимания их влияния на процесс разрешения конфликта.

Для достижения этой цели были поставлены следующие **задачи**:

- обеспечить прочную теоретическую основу для анализа дипломатического дискурса, сосредоточившись на его прагмалингвистических особенностях и взаимодействии между языком, властью и международными отношениями. Это позволит понять, как эти элементы влияют на эффективность дипломатической коммуникации и результаты международных переговоров,
- проанализировать пораженческий дискурс в заявлениях и докладах Минской группы ОБСЕ и определить, как пессимизм, двусмысленность и негативные оценки способствовали неэффективности дипломатических усилий в нагорно-карабахском конфликте,
- изучить конкретные языковые маркеры, включая двусмысленность, тональность и негативную оценку, и определить, как эти элементы влияют на потенциал эффективного разрешения конфликта,
- провести детальное сравнение языковых элементов и прагмалингвистических особенностей в официальных документах, связанных с конфликтами в Косово и Нагорном Карабахе, чтобы выявить, как различия в использовании языка способствовали различным исходам этих конфликтов.

Таким образом, необходимо провести прагмалингвистический анализ документов по конфликтам в Нагорном Карабахе и Косово, чтобы изучить, как язык функционирует как инструмент, формирующий повествование, влияющий на восприятие устойчивости и воздействующий на потенциальные результаты разрешения конфликта.

Актуальность данного исследования обусловлена растущим научным интересом к прагмалингвистическому использованию языка в дипломатической коммуникации, что подчеркивает важность языка и его проявлений. В этом контексте прагмалингвистическое исследование документов Минской группы ОБСЕ, касающихся нагорно-карабахского конфликта, имеет особое значение, так как оно выявляет прагмалингвистические и дискурсивные особенности этих текстов.

Научная новизна данного исследования заключается в применении прагмалингвистического и дискурсивного анализа к документации Минской группы ОБСЕ, которая ранее не подвергалась широкому исследованию в рамках лингвистики. Впервые предпринимается попытка описать, проанализировать и сравнить документы Минской группы ОБСЕ с точки зрения дискурсивного и прагмалингвистического подходов. Выбор объекта исследования, а именно документов Минской группы ОБСЕ, также является новизной с лингвистической точки зрения, поскольку они до сих пор не подвергались глубокому и систематическому лингвистическому анализу.

Теоретическая значимость данной диссертации в контексте Минской группы ОБСЕ заключается в новаторском применении дискурсивного и прагмалингвистического анализа к документам группы, касающимся нагорно-карабахского конфликта. Другими словами, работа предлагает новые теоретические подходы к стратегическому применению языка в дипломатии, что способствует лучшему пониманию влияния прагматики и дискурса на международные переговоры и разрешение конфликтов.

Практическая значимость данной диссертации заключается в ее потенциале предоставлять ценные идеи для дипломных работ, эссе, диссертаций и научных статей, особенно тех, которые посвящены дипломатическому дискурсу, разрешению конфликтов, а также анализу текста и дискурса. Результаты могут послужить основой для разработки лингвистических учебных программ, предназначенных для дипломатов, а также предложить рекомендации для более эффективных и контекстуально соответствующих методов коммуникации в дипломатии.

